# Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

# Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2018-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ»:

2018-2019 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) պահանջներին համապատասխան կազմակերպվել և անցկացվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, Երևանի ավագանու արտահերթ ընտրություններ և ընդհանուր թվով 170 համայնքներում անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են 2018 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 132-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների հետ կապված իր գործունեության վերաբերյալ հաղորդումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել 2019 թվականին, որում մանրամասն ներկայացվել է գործունեության ամբողջական հաշվետվություն և այն քննարկվել է սահմանված կարգով:

Սոսկ փաստենք, որ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները կազմակերպվեցին և անցկացվեցին Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր ժամկետների լիակատար պահպանմամբ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում արձանագրվել է, որ ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների

պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, իսկ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) իր աշխատանքը կատարել է արհեստավարժ կերպով ու թափանցիկության պայմաններում և պահպանել է օրենքով սահմանված բոլոր ժամկետները՝ չնայած ժամանակի սղությանը: ԿԸՀ-ն և Տարածքային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) վայելում էին ընտրական շահառուների վստահությունը»:

Ուշագրավ է հիշատակել Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի կողմից իրականացված հետընտրական հարցման արդյունքներից մի քանի տվյալ, համաձայն որոնց հարցման մասնակիցների 62%-ը լիովին կամ մասամբ համաձայնվել է, որ ԿԸՀ-ն անկախ ինստիտուտ է, որի վրա չկա ազդեցություն՝ պայմանավորված քաղաքական նկատառումներով, 74%-ը լիովին կամ մասամբ համաձայնվել է, որ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ն ընտրությունների կազմակերպման հարցում գործել է արհեստավարժ, իսկ հարցվածների 73%-ը լիովին կամ մասամբ համաձայնել են, որ ԿԸՀ-ն գործել է թափանցիկ:

Հարկ է նկատել, որ նորանկախ Հայաստանի պատմության ընթացքում առաջին անգամ խորհրդարանական ընտրության արդյունքները դատական կարգով որևէ մեկի կողմից չվիճարկվեցին: Ընտրության արդյունքներն ընդունվեցին թե՛ ընտրողների, թե՛ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի և թե՛ քաղաքացիական հասարակության կողմից: Ըստ վերոհիշյալ հարցման տվյալների հարցման մասնակիցների 75%-ը վստահել է տեղամասային կենտրոնում հաշվարկված քվեներին և միայն 3%-է հայտնել անվստահություն քվեների հաշվարկի գործընթացին:

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի ավագանու արտահերթ ընտրություններն անցկացվել են 2018 թվականի սեպտեմբերի 23-ին՝ Ընտրական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններին մասնակցել են «Բարգավաճ Հայաստան», «Երկիր Ծիրանի», «Ժառանգություն», «Ժողովրդավարական ուղի», «Հայ Յեղափոխական դաշնակություն», «Հայք» (Հայկազուններ), Ռեֆորմիստների և «Օրինաց Երկիր» կուսակցություններն ու Երևանի Հանրություն դաշինքը, Երևանցիներ դաշինքը, Իմ քայլը դաշինքը և Լույս դաշինքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին և 128-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Երևան քաղաքում կազմավորվել է թվով 475 ընտրական տեղամաս, որոնցում սահմանված կարգով

նշանակվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի 4722 անդամներ: Քվեարկության օրը նշված քաղաքացիներից բացակայել են 31-ը:

Ընտրությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացրել են Երևան քաղաքի տարածքում կազմավորված թվով 10 տարածքային ընտրական հանձնաժողովները: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Տեղական դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվել են 8 հասարակական կազմակերպություններ, որոնց անունից հավատարմագրված դիտորդների ընդհանուր թիվն է՝ 662: Միջազգային դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով, որպես միջազգային կազմակերպություն, հավատարմագրվել է Ընտրական համակարգերի միջազգային փորձագիտական կենտրոն Այ Սի Ի Էս կազմակերպությունը (4 միջազգային դիտորդ): Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների թվով 11 ներկայացուցիչներ ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել են ընտրական գործընթացի դիտարկում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվել են 44 տեղական զանգվածային լրատվության միջոցների թվով 620 ներկայացուցիչներ: Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու նպատակով հավատարմագրվել է օտարերկրյա 5 զանգվածային լրատվության միջոց:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 30-ին հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմել է արձանագրություն՝ Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ընտրությունների կազմակերպման և ընտրական գործընթացների վերաբերյալ որևէ դիմում չի ներկայացվել:

Երևանի ավագանու 2018թ. սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների քվեարկության օրը Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներին որևէ գրավոր դիմում չի ներկայացվել, սակայն Կենտրոնական ընտրական

հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում ներկայացվել են առանձին տեղեկություններ ընտրախախտումների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և ներկայացվող փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել է մեկ տասնյակից ավելի կայքերում տեղ գտած ավելի քան ութ տասնյակ հաղորդումների, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է մի շարք ինստիտուտներ, որոնց նպատակն է իրականացնել ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների իրավունքների լիակատար և ամբողջական պաշտպանություն: Ցանկացած իրավախախտում փաստելու, արձանագրելու, բողոքարկելու բոլոր հնարավորությունները լիարժեք ծավալով ամրագրված են Ընտրական օրենսգրքում: Ամրագրված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք ապահովում են լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Համաձայն նշված իրավադրույթի.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

Ուշագրավ է, որ նման իրավունք վերապահվում է թե ընտրություններին մասնակցող կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), և թե ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուին: Ի դեպ, բնավ, պարտադիր չէ նրանց կողմից տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու հանգամանքը:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններին մասնակցող 8 կուսակցություններից և 4 կուսակցությունների դաշինքից, նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 977 թեկնածուներից, ինչպես նաև նրանց ընդհանուր թվով 2774 վստահված անձանցից, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրությունում հատուկ կարծիք ունենալու վերաբերյալ գրառում կատարած տեղամասային ընտրական հանձնաժողովի մեկ անդամից և որևէ մեկը չի ներկայացրել դիմում՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում

քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում»:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Նկատենք, որ վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ: Այն պետք է ներառի դիմումատուի անունը, ազգանունը, փոստային հասցեն և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ:

Դիմումին քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ կցելը սոսկ դիսպոզիտիվ պարտականություն է, և դրա չկատարումը չի կարող հանգեցնել որևէ հետևանքի, այդ թվում՝ վերահաշվարկի կատարումը մերժելուն:

Երևան քաղաքում կազմավորված 475 ընտրական տեղամասերում Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ դիմում չի ներկայացվել: Քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ դիմում ներկայացված է եղել «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուի կողմից, որով պահանջվել էր վերահաշվարկել թիվ 3/05 տեղամասում քվեարկության արդյունքները: Դիմումատուն ներկա չէր եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, որի հիմքով դիմումը մերժվել է, սակայն տարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրել է նշված տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Վերահաշվարկի արդյունքում տեղամասային ընտրական հանձնաժողում արձանագրված տվյալների որևէ տարբերություն չի արձանագրվել:

Քվեարկության արդյունքների արձանագրությունների ուսումնասիրմամբ թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովում ծագել են թիվ 8/33 ընտրական տեղամասի արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ կասկածներ, որի հիմքով և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի պահանջներով տարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրել է վերահաշավարկ, որի արդյունքում ևս՝ տեղամասային ընտրական հանձնաժողում արձանագրված տվյալների էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն. «Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է

ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:»:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում չի ներկայացվել:

Ընտրական իրավունքների պաշտպանության առումով Ընտրական օրենսգիրքը սահմանել է նոր ինստիտուտ՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների, բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող՝ հրապարակում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»:

Չնայած այն հանգամանքին, որ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ Ընտրական օրենսգիրքն ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորման և ըստ ընտրական տեղամասերի որոնման հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու պահանջ չի նախատեսում, այդուհանդերձ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրողների ստորագրված ցուցակները սկանավորվել են և 2018 թվականի սեպտեմբերի 24-ին, ժամը 21:00-ի սահմաններում տեղադրված են եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, որի վերաբերյալ տարածվել է մամլո հաղորդագրություն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել

այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամանակահատվածից հետո, ընտրական հանձնաժողովներում, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, չի ստացվել որևէ դիմում՝ այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու վերաբերյալ: Չի եղել անգամ որևէ հրապարակում կամ հրապարակային փաստի հայտարարում՝ այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու վերաբերյալ:

Քվեարկության օրվանից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստացել է թվով երեք դիմում-բողոք դիտորդական առաքելություն իրականացնող երկու հասարակական կազմակերպությունների և նրանց դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից, որոնցով վիճարկվել են թիվ 3, 6 և 7 տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 29-ին իրականացրել է նշված դիմում-բողոքների քննարկում և կայացրել թիվ 74-Ա, 75-Ա և 76-Ա որոշումները:

Քվեարկության օրվանից հետո թվով 10 տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է ընդհանուր առմամբ թվով 9 դիմում-բողոք՝ բացառապես դիտորդական առաքելություն իրականացրած երկու հասարակական կազմակերպությունների և նրանց դիմումներով հավատարմագրված դիտորդների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են թվով 9 որոշումներ: Վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում նշված որոշումներով տարածքային ընտրական հանձնաժողովները դիմումներում ներկայացված հանգամանքները դարձրել են ուսումնասիրման առարկա և նույն վարույթների շրջանակներում գնահատել են դրանց ազդեցությունը տեղամասում քվեարկության արդյունքների վրա:

Տարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց կողմից ընդունված որոշումներով միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել այն տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների (քարտուղարների)՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները, ովքեր թույլ են տվել Ընտրական օրենսգրքի պահանջների առանձին խախտումներ:

Նշված միջնորդությունների ուսումնասիրմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչել թվով 3 քաղաքացիների ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայց չի ներկայացվել: Դատական ակտով

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները կամ գործողությունները ոչ իրավաչափ չեն ճանաչվել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»: Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

Միայն 133 (կամ տեղամասերի ընդհանուր թվի 28%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 241 գրառումներ, իսկ 342 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չի եղել:

Թվով 475 տեղամասերից միայն 1 տեղամասի (0.2%) քվեարկության արդյունքների արձանագրությունում էր առկա նշում հատուկ կարծիք ունենալու մասին: Ուշագրավ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 4693 անդամներից միայն մեկն է (0.02%) ներկայացրել հատուկ կարծիք:

2018 թվականի սեպտեմբերի 27-ին բոլոր 10 տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ՝ Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրություններում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 23.09.2018թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից

նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ, համաձայն որի.

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 17.192 րոպե 39 վայրկյան, այսինքն՝ ավելի քան 286 ժամ:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

2018թ. սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից բողոք չի ստացել: Պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության (10.09.2018-21.09.2018թթ.), ինչպես նաև քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20.00-ն Ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Կարևոր ենք համարում փաստել, որ ընտրության արդյունքները դատական կարգով որևէ մեկի կողմից չվիճարկվեցին:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018-2019ԹԹ.

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2017 թվականի հուլիսի 11-ի թիվ 295-Ա որոշմամբ 2018 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էր սահմանել 2018 թվականի մարտի 11-ը, 2018 թվականի հունիսի 10-ը, 2018 թվականի հոկտեմբերի 21-ը, 2018 թվականի հուլիսի 17-ի թիվ 26-Ա որոշմամբ՝ 2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էին սահմանվել 2019 թվականի փետրվարի 17-ը, 2019 թվականի հունիսի 9-ը, 2019 թվականի սեպտեմբերի 29-ը և 2019 թվականի հուլիսի 30-ի թիվ 37-Ա որոշմամբ 2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օր սահմանվեց նաև 2019 թվականի դեկտեմբերի 8-ը:

Նշենք նաև, որ 2018 թվականի հունիսի 10-ին նշանակված Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ավագանու անդամների ընտրությունները ճանաչվել են չկայացած Ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, ըստ որի. «Համայնքի ավագանու անդամների ընտրությունը համարվում է չկայացած, եթե սույն օրենսգրքով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով գրանցված թեկնածուների թիվը պակաս կամ հավասար է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ համայնքի ավագանու անդամների թվին, կամ գրանցումից հետո թեկնածուների թիվը նվազում է սույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ համայնքի ավագանու անդամների թվի կեսից, կամ վերաքվեարկության արդյունքների հիման վրա համայնքի ավագանու ընտրությունն անվավեր է ճանաչվել:»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2018 թվականի հունիսի 24-ին նշանակվել և անցկացվել են Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ավագանու անդամների նոր ընտրություն:

2018 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել 88 համայնքներում, որոնցից 26-ում՝ արտահերթ, իսկ 2019 թվականի ընթացքում՝ 82 համայնքներում, որոնցից 31-ում՝ արտահերթ:

Նշված համայնքներից 129-ում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի, իսկ 60-ում՝ ավագանու անդամի ընտրություններ: Նշված համայնքներից 6-ը հանդիսացել են

քաղաքային համայնքներ: Այդ ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել են ընդհանուր թվով 387 ընտրական տեղամասեր, որոնցում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 457.188, իսկ քվեարկությանը մասնակցել են 214.181-ը:

2018 և 2019 թվականների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առաջադրվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի 1011 թեկնածուներ: Որևէ թեկնածուի գրանցում չի մերժվել տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Ինքնաբացարկ են ներկայացրել 95 թեկնածուներ և քվեարկություններին մասնակցել են 916 թեկնածուներ:

2018 թվականի մարտի 11-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ներկայացվել է 1 դիմում՝ Արարատի մարզի Նորամարգ համայնքում թիվ 11/6 տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին: Նշված դիմումի հիմքով վերահաշվարկ է իրականացվել, որի արդյունքում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել:

2018 թվականի հունիսի 10-ի ընտրությունների, 2018 թվականի հունիսի 24-ի՝ Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ավագանու անդամների նոր ընտրության և 2018 թվականի հոկտեմբերի 21-ի ընտրությունների ժամանակ որևէ դիմում բողոք չի ներկայացվել:

2019 թվականի փետրվարի 17-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ներկայացվել է մեկ դիմում-բողոք թիվ 13 տարածքային ընտրական հանձնաժողովում՝ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից, իսկ թիվ 21 և 38 տարածքային ընտրական հանձնաժողովներում՝ Ակունք և Իջևան համայնքներում տեղամասում քվեարկության արդյունքների վերհաշվարկ կատարելու թվով 9 դիմում, որոնցից 8-ը բավարարվել է, իսկ 1 դիմում մերժվել է՝ դիմումը իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված չլինելու հիմքով: Թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ վերահաշվակ է կատարել ևս 2 տեղամասերում: Վերահաշվարկների արդյունքում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել: Թվով 56 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 8-ում առկա են եղել թվով 9 գրառում, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ, ըստ որոնց արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

2019 թվականի հունիսի 9-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է վերահաշվարկի մեկ դիմում՝ Գորայք համայնքի թիվ 34/3 տեղամասում վերահաշվարկ իրականացնելու պահանջով և 3 դիմում-բողոք՝ տեղամասում քվեարկության կարգի խախտումների վերաբերյալ: Բոլոր դիմումները սահ-

մանված կարգով քննարկվել են, վերահաշվարկի արդյունքում թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովը որևէ էական փոփոխություն չի արձանագրել: Գորայք համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքները բողոքարկվել են Հայաստանի Հանրապետության վարչական դատարան և դատարանն անվավեր է ճանաչել Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի 09.06.2019թ. ընտրությունները: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի ՎԴ/4536/05/19 վարչական գործով 24.06.2019թ. որոշումը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունել 2019 թվականի հունիսի 30-ին Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի ընտրությունների վերաքվեարկություն անցկացնելու վերաբերյալ:

2019 թվականի հունիսի 9-ին հանրապետության 23 համայնքներում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին կամ որևէ այլ դիմում մնացած համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովներ չեն ներկայացվել: Թվով 59 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից 18-ում առկա են եղել թվով 36 գրառում, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ, ըստ որոնց արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

2019 թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է մեկ դիմում-բողոք թեկնածուի լիազոր ներկայացուցչի կողմից, ինչպես նաև ներկայացվել է թվով չորս դիմում՝ տեղամասում քվեարկության արդյունքների վերհաշվարկ կատարելու պահանջով. երեքը՝ թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողով (Արտաշատ համայնքի տեղամասերի վերաբերյալ) և մեկ դիմում թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողով (Չկալով համայնքի տեղամասի վերաբերյալ):

Թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված միակ դիմում-բողոքի քննարկմամբ ընդունված որոշմամբ դիմումը մերժվել է: Ինչ վերաբերում է քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին թվով 3 դիմումներին, ապա դրանք մերժվել են դիմումը ոչ իրավասու սուբյեկտների կողմից ներկայացված լինելու պատճառաբանությամբ, սակայն միաժամանակ ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով, թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ իրականացրել է վերը նշված դիմումներում թվարկած թիվ 12/1, 21/2, 12/8, 12/10, 12/11, 12/12 ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որոնց արդյունքում արձանագրվել են աննշան և որևէ ազդեցության չհանգեցնող փոփոխություններ:

Թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովում Չկալով համայնքի ավագանու անդամի թեկնածուից ստացվել է դիմում՝ թիվ 24/2 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին, որը մերժվել է և նույն որոշմամբ թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովը Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ սեփական նախաձեռնությամբ իրականացրել է Չկալով համայնքի թիվ 24/2 տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Վերահաշվարկի արդյունքում պարզվել է, որ քվեաթերթիկում 5-րդ համարի թեկնածու՝ Վահագն Վոլոդյայի Մխիթարյանի կողմ ձայներ թիվը 5 է՝ նշված 13-ի փոխարեն, իսկ 6-րդ համարի թեկնածու Վարդան Սամվելի Մխիթարյանի կողմ ձայների թիվը 13 է՝ նշված 5-ի փոխարեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած արձանագրության այլ թվային տվյալների փոփոխություն տեղի չի ունեցել:

2019 թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թվով 33 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 5-ում առկա են եղել թվով 9 գրառում, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ, ըստ որոնց արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

2019 թվականի դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ միայն թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է տեղամասում քվեարկության արդյունքների վերհաշվարկ կատարելու մեկ դիմում, որը մերժվել է՝ դիմումը իրավասու սուբյեկտի կողմից ներկայացված չլինելու հիմքով: Միաժամանակ թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովն Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ սեփական նախաձեռնությամբ իրականացրել է Շիրակի մարզի Անուշավան համայնքի թիվ 33/1 տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկ, որի արդյունքում որևէ փոփոխություն չի արձանագրվել:

2019 թվականի դեկտեմբերի 8-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թվով 19 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններից միայն 5-ում առկա են եղել թվով 11 գրառում, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ, ըստ որոնց արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները չեն ազդել քվեարկության արդյունքների վրա:

Հարկ է նկատել մեկ կարևորագույն հանգամանք. 2018 և 2019 թվականների ընթացքում ընդհանուր առմամբ անց են կացվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 170 համայնքներում, կազմավորվել են ընդհանուր թվով 387 ընտրական տեղամասեր և տեղի ունեցած ընտրություններից հետո վերահաշվարկ կատարելու վերաբերյալ ներկայացված է եղել ընդհանուր թվով 18

դիմում, որոնցից 6-ը՝ ոչ իրավասու սուբյեկտների կողմից և վերաբերել են ընդամենը 21 տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելուն: Այսինքն, կազմավորված տեղամասերի 5.4% պարագայում է, որ ներկայացվել է վերահաշվարկի պահանջ: Առկա չէ վերահաշվարկ կատարելու վերաբերյալ դիմումով ներկայացված որևէ տեղամաս, որի քվեարկության արդյունքների վերահաշվարկ իրականացված չլինի: Անգամ այն դեպքերում, երբ դիմումը ներկայացված է եղել ոչ իրավասու սուբյեկտի կողմից, տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկն իրականացրել է սեփական նախաձեռնությամբ՝ ապահովելով լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացի նկատմամբ՝ դրանով իսկ վերացնելով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների մոտ հնարավոր կասկածները քվեարկության արդյունքների նկատմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2018-2019 թթ. ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել թվով 25 հավատարմագրման դիմում:

2018 և 2019 թվականներին կայացած ընտրությունների ժամանակ չեն գրանցվել ընտրական հանձնաժողովների կողմից, հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին կամ վստահված անձին հեռացնելու, կամ քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվ սահմանելու դեպքեր չեն արձանագրվել:

| **ՏԻՄ ընտրության ամսաթիվ** | **ՀԿ-ների ընդհանուր թիվը** | **Միջազգային կազմակերպու-թյուններ** | **Տեղական ՀԿ-ներ** | **Դիտորդների ընդհանուր թիվը** |
|---|---|---|---|---|
| 2018**թ. մարտի** 11 | 2 | 0 | 2 | 115 |
| 2018**թ. հունիսի** 10 | 0 | 0 | 0 | 0 |
| 2018**թ. հունիսի** 24 | 0 | 0 | 0 | 0 |
| 2018**թ. հոկտեմբերի** 21 | 5 | 0 | 5 | 650 |
| 2019**թ. փետրվարի** 17 | 5 | 0 | 5 | 115 |
| 2019**թ. հունիսի** 9 | 6 | 0 | 6 | 179 |
| 2019**թ. սեպտեմբերի** 29 | 3 | 0 | 3 | 144 |
| 2019**թ. դեկտեմբերի** 8 | 4 | 0 | 4 | 147 |

## 2018Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Տեղեկատվություն ընտրությունների վերաբերյալ

| Մարզ | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | համայնքի ղեկավար | | | | ավագանու անդամի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | որից՝ | | | Ընդամենը | որից՝ | | |
| | | | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | 10000 և ավելի | | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | 10000 և ավելի |
| Արագածոտն | 11 | 8 | 1 | 0 | 0 | 5 | 1 | 0 | 0 |
| Արարատ | 18 | 17 | 4 | 0 | 0 | 11 | 0 | 0 | 0 |
| Արմավիր | 23 | 16 | 5 | 2 | 2 | 7 | 1 | 0 | 0 |
| Գեղարքունիք | 9 | 8 | 3 | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Լոռի | 10 | 7 | 3 | 0 | 0 | 4 | 0 | 0 | 0 |
| Կոտայք | 9 | 7 | 5 | 1 | 1 | 2 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 3 | 2 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Սյունիք | 1 | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 4 | 3 | 1 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 88 | 69 | 23 | 4 | 4 | 34 | 3 | 0 | 0 |

որից՝

| Հերթական ընտրությունների օրերը | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | համայնքի ղեկավար | | | ավագանու անդամի | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդ. | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | ընդ. | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք |
| 11/03/2018 | 20 | 14 | 0 | 0 | 16 | 1 | 0 |
| 10/06/2018 | 18 | 12 | 0 | 0 | 11 | 0 | 0 |
| 24/06/2018 | 1[1] | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 |
| 21/10/2018 | 49 | 43 | 23 | 4 | 7 | 2 | 0 |
| Ընդամենը | 88 | 69 | 23 | 4 | 35 | 4 | 0 |




[1] Անցկացվել է նոր ընտրություն հերթական ընտրությունը չկայացած ճանաչվելու պատճառով

## Տեղեկատվություն 2018թ. կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

| Մարզ | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | կազմավորված տեղամասերի թիվը | Ընտրողների թիվը | քվեարկության մասնակիցների թիվ | % |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 11 | 11 | 3155 | 1589 | 50.36 |
| Արարատ | 18 | 20 | 26166 | 13001 | 49.69 |
| Արմավիր | 23 | 64 | 98037 | 37542 | 38.29 |
| Գեղարքունիք | 9 | 16 | 22329 | 10008 | 44.82 |
| Լոռի | 10 | 10 | 6782 | 3577 | 52.74 |
| Կոտայք | 9 | 40 | 59307 | 24710 | 41.66 |
| Շիրակ | 3 | 3 | 1252 | 594 | 47.44 |
| Սյունիք | 1 | 52 | 34969 | 19503 | 55.77 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0.00 |
| Տավուշ | 4 | 5 | 4017 | 2416 | 60.14 |
| **Ընդամենը** | 88 | 221 | 256014 | 112940 | 44.11 |






# Տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ

| Մարզ | Առաջադրված թեկնածուներ | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | Ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 54 | 10 | 0 | 44 | 30 |
| Արարատ | 148 | 13 | 0 | 135 | 90 |
| Արմավիր | 122 | 10 | 0 | 112 | 59 |
| Գեղարքունիք | 45 | 7 | 0 | 38 | 23 |
| Լոռի | 55 | 7 | 0 | 48 | 31 |
| Կոտայք | 50 | 4 | 0 | 45 | 23 |
| Շիրակ | 10 | 2 | 0 | 8 | 7 |
| Սյունիք | 4 | 1 | 0 | 3 | 1 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 22 | 7 | 0 | 15 | 12 |
| Ընդամենը | 510 | 61 | 0 | 448 | 276 |

## Մրցակցությունն ըստ մարզերի



# Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 20 | 5 | 0 | 15 | 8 |
| Արարատ | 45 | 11 | 0 | 34 | 17 |
| Արմավիր | 62 | 6 | 0 | 56 | 16 |
| Գեղարքունիք | 24 | 3 | 0 | 21 | 8 |
| Լոռի | 24 | 4 | 0 | 20 | 7 |
| Կոտայք | 20 | 2 | 0 | 17 | 7 |
| Շիրակ | 4 | 1 | 0 | 3 | 2 |
| Սյունիք | 4 | 1 | 0 | 3 | 1 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 7 | 2 | 0 | 5 | 3 |
| Ընդամենը | 210 | 35 | 0 | 174 | 69 |



## Ըստ քվեաթերթիկներում ընդգրված թեկնածուների քանակի

| Մարզ | քվեաթերթիկում ընդգրված թեկնածուների քանակը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 թեկնածու | 2 թեկնածու | 3 թեկնածու | 4 թեկնածու | 5 թեկնածու | 12 թեկնածու |
| Արագածոտն | 4 | 3 | 0 | 0 | 1 | 0 |
| Արարատ | 9 | 2 | 4 | 1 | 1 | 0 |
| Արմավիր | 2 | 5 | 2 | 4 | 2 | 1 |
| Գեղարքունիք | 1 | 4 | 0 | 3 | 0 | 0 |
| Լոռի | 2 | 1 | 1 | 2 | 1 | 0 |
| Կոտայք | 1 | 3 | 2 | 1 | 0 | 0 |
| Շիրակ | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Սյունիք | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 1 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը | 21 | 21 | 10 | 11 | 5 | 1 |






## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 34 | 5 | 0 | 29 | 22 |
| Արարատ | 103 | 2 | 0 | 101 | 73 |
| Արմավիր | 60 | 4 | 0 | 56 | 43 |
| Գեղարքունիք | 21 | 4 | 0 | 17 | 15 |
| Լոռի | 31 | 3 | 0 | 28 | 24 |
| Կոտայք | 30 | 2 | 0 | 28 | 16 |
| Շիրակ | 6 | 1 | 0 | 5 | 5 |
| Սյունիք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 15 | 5 | 0 | 10 | 9 |
| Ընդամենը | 300 | 26 | 0 | 274 | 207 |



# Ըստ թեկնածուների կուսակցական պատկանելության

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադր-ված | ինքնաբացարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ ինքնաառաջադրումով | ընտրված | որից՝ ինքնաառաջա-դրումով |
|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ | 164 | 31 | 132 | 129 | 42 | 40 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 8 | 1 | 7 | 2 | 4 | 1 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 2 | 0 | 2 | 2 | 1 | 1 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 18 | 2 | 16 | 7 | 12 | 4 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 17 | 1 | 16 | 16 | 10 | 10 |
| **Ընդամնեը** | 210 | 35 | 174 | 156 | 69 | 56 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադրված | ինքնաբացարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ ինքնաառաջադրումով | ընտրված | որից՝ ինքնաառաջադրումով |
|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ | 202 | 21 | 181 | 178 | 132 | 130 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 8 | 1 | 7 | 6 | 6 | 5 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 4 | 0 | 4 | 4 | 3 | 3 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 79 | 3 | 76 | 21 | 61 | 18 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 7 | 1 | 6 | 6 | 5 | 5 |
| **Ընդամենը** | 300 | 26 | 274 | 215 | 207 | 161 |



# Ըստ թեկնածուների առաջադրման

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադր-ված | ինքնաբա-ցարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ անկուսակ-ցական | ընտրված | որից՝ անկուսակ-ցական |
|---|---|---|---|---|---|---|
| Ինքնաառաջադրում | 191 | 34 | 156 | 129 | 56 | 40 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 8 | 1 | 7 | 2 | 4 | 1 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 10 | 0 | 10 | 1 | 9 | 1 |
| **Ընդամենը** | 210 | 35 | 174 | 132 | 69 | 42 |

## Ավագանու անդամի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադր-ված | ինքնաբա-ցարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ անկուսակ-ցական | ընտրված | որից՝ անկուսակ-ցական |
|---|---|---|---|---|---|---|
| Ինքնաառաջադրում | 239 | 24 | 215 | 178 | 161 | 130 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 0 | 1 | 0 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 60 | 2 | 58 | 3 | 45 | 2 |
| **Ընդամենը** | 300 | 26 | 274 | 181 | 207 | 132 |



# Ըստ թեկնածուների սեռի

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | | ինքնաբացարկ | | քվ. մասն. | | ընտրված | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | արական | իգական | արական | իգական | արական | իգական |
| Արագածոտն | 20 | 0 | 5 | 0 | 15 | 0 | 8 | 0 |
| Արարատ | 44 | 1 | 11 | 0 | 33 | 1 | 16 | 1 |
| Արմավիր | 58 | 4 | 6 | 0 | 52 | 4 | 15 | 1 |
| Գեղարքունիք | 23 | 1 | 2 | 1 | 21 | 0 | 8 | 0 |
| Լոռի | 23 | 1 | 4 | 0 | 19 | 1 | 7 | 0 |
| Կոտայք | 20 | 0 | 2 | 0 | 17 | 0 | 7 | 0 |
| Շիրակ | 4 | 0 | 1 | 0 | 3 | 0 | 2 | 0 |
| Սյունիք | 4 | 0 | 1 | 0 | 3 | 0 | 1 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 7 | 0 | 2 | 0 | 5 | 0 | 3 | 0 |
| Ընդամենը | 203 | 7 | 34 | 1 | 168 | 6 | 67 | 2 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | | ինքնաբացարկ | | քվ. մասն. | | ընտրված | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **արական** | **իգական** | **արական** | **իգական** | **արական** | **իգական** | **արական** | **իգական** |
| Արագածոտն | 26 | 8 | 3 | 2 | 23 | 6 | 17 | 5 |
| Արարատ | 88 | 15 | 2 | 0 | 86 | 15 | 62 | 11 |
| Արմավիր | 57 | 3 | 4 | 0 | 53 | 3 | 40 | 3 |
| Գեղարքունիք | 14 | 7 | 1 | 3 | 13 | 4 | 11 | 4 |
| Լոռի | 23 | 8 | 1 | 2 | 22 | 6 | 19 | 5 |
| Կոտայք | 29 | 1 | 2 | 0 | 27 | 1 | 16 | 0 |
| Շիրակ | 6 | 0 | 1 | 0 | 5 | 0 | 5 | 0 |
| Սյունիք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 11 | 4 | 3 | 2 | 8 | 2 | 7 | 2 |
| Ընդամենը | 254 | 46 | 17 | 9 | 237 | 37 | 177 | 30 |



# Ըստ թեկնածուների տարիքի

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | մինչև 40 | որից՝ ընտրված | 40-60 | որից՝ ընտրված | 60 և ավելի | որից՝ ընտրված |
|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 3 | 2 | 8 | 3 | 4 | 3 |
| Արարատ | 15 | 6 | 17 | 9 | 2 | 2 |
| Արմավիր | 28 | 7 | 25 | 6 | 3 | 3 |
| Գեղարքունիք | 10 | 1 | 6 | 5 | 5 | 2 |
| Լոռի | 11 | 5 | 7 | 1 | 2 | 1 |
| Կոտայք | 10 | 4 | 7 | 3 | 0 | 0 |
| Շիրակ | 1 | 0 | 1 | 1 | 1 | 1 |
| Սյունիք | 3 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 3 | 3 | 1 | 0 | 1 | 0 |
| Ընդամենը | 84 | 29 | 72 | 28 | 18 | 12 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | մինչև 40 | որից՝ ընտրված | 40-60 | որից՝ ընտրված | 60 և ավելի | որից՝ ընտրված |
|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 10 | 8 | 12 | 9 | 7 | 5 |
| Արարատ | 32 | 24 | 52 | 40 | 17 | 9 |
| Արմավիր | 38 | 33 | 15 | 10 | 3 | 0 |
| Գեղարքունիք | 6 | 5 | 8 | 7 | 3 | 3 |
| Լոռի | 14 | 12 | 7 | 6 | 7 | 6 |
| Կոտայք | 15 | 7 | 11 | 8 | 2 | 1 |
| Շիրակ | 3 | 3 | 2 | 2 | 0 | 0 |
| Սյունիք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 5 | 5 | 4 | 3 | 1 | 1 |
| Ընդամենը | 123 | 97 | 111 | 85 | 40 | 25 |



## 2019Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Տեղեկատվություն ընտրությունների վերաբերյալ

| Մարզ | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | համայնքի ղեկավար | | | | ավագանու անդամի | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | որից՝ | | | Ընդամենը | որից՝ | | |
| | | | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | 10000 և ավելի | | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | 10000 և ավելի |
| Արագածոտն | 11 | 8 | 1 | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Արարատ | 11 | 6 | 4 | 0 | 0 | 5 | 3 | 1 | 1 |
| Արմավիր | 19 | 15 | 5 | 0 | 0 | 4 | 3 | 0 | 0 |
| Գեղարքունիք | 9 | 8 | 3 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Լոռի | 10 | 7 | 3 | 0 | 0 | 5 | 2 | 0 | 0 |
| Կոտայք | 5 | 5 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 8 | 5 | 2 | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Սյունիք | 1 | 1 | 1 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 7 | 4 | 1 | 0 | 0 | 4 | 0 | 1 | 1 |
| **Ընդամենը** | 82 | 60 | 22 | 2 | 2 | 26 | 9 | 2 | 2 |

որից՝

| Հերթական ընտրությունների օրերը | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | համայնքի ղեկավար | | | ավագանու անդամի | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդ. | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք | ընդ. | որից՝ արտա-հերթ | քաղաք. համայնք |
| 17/02/2019 | 24 | 20 | 9 | 1 | 4 | 1 | 1 |
| 09/06/2019 | 23 | 15 | 8 | 1 | 11 | 3 | 0 |
| 30/06/2019 | 1[2] | 1[3] | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 29/09/2019 | 19 | 13 | 3 | 0 | 7 | 3 | 1 |
| 08/12/2019 | 16 | 12 | 2 | 0 | 4 | 2 | 0 |
| Ընդամենը | 82 | 60 | 22 | 2 | 26 | 9 | 2 |




[2] Գորայք համայնքում վերաքվեարկություն
[3] Գորայք համայնքում ընտրվել է վերաքվեարկության արդյունքում

## Տեղեկատվություն 2019թ. կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

| Մարզ | համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ | կազմավորված տեղամասերի թիվը | Ընտրողների թիվը | քվեարկության մասնակիցների թիվ | % |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 11 | 12 | 7194 | 4545 | 63.18 |
| Արարատ | 11 | 28 | 38001 | 19112 | 50.29 |
| Արմավիր | 19 | 24 | 31291 | 15544 | 49.68 |
| Գեղարքունիք | 9 | 19 | 26005 | 13911 | 53.49 |
| Լոռի | 10 | 10 | 4508 | 1998 | 44.32 |
| Կոտայք | 5 | 32 | 52639 | 23207 | 44.09 |
| Շիրակ | 8 | 20 | 14748 | 7904 | 53.59 |
| Սյունիք | 1 | 4 | 1408 | 1071 | 76.07 |
| Վայոց ձոր | 1 | 2 | 3756 | 2028 | 53.99 |
| Տավուշ | 7 | 15 | 21624 | 11921 | 55.13 |
| **Ընդամենը** | 82 | 166 | 201174 | 101241 | 50.33 |






# Տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ

| Մարզ | Առաջադրված թեկնածուներ | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | Ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 39 | 6 | 0 | 33 | 22 |
| Արարատ | 117 | 5 | 0 | 112 | 49 |
| Արմավիր | 85 | 6 | 0 | 79 | 39 |
| Գեղարքունիք | 44 | 3 | 0 | 41 | 15 |
| Լոռի | 54 | 4 | 0 | 50 | 34 |
| Կոտայք | 17 | 1 | 0 | 16 | 5 |
| Շիրակ | 46 | 0 | 0 | 46 | 26 |
| Սյունիք | 24 | 1 | 0 | 23 | 8 |
| Վայոց ձոր | 5 | 3 | 0 | 2 | 1 |
| Տավուշ | 70 | 5 | 0 | 65 | 38 |
| Ընդամենը | 501 | 34 | 0 | 467 | 237 |

## Մրցակցությունն ըստ մարզերի



# Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 21 | 5 | 0 | 16 | 7[4] |
| Արարատ | 25 | 2 | 0 | 23 | 6 |
| Արմավիր | 45 | 5 | 0 | 40 | 15 |
| Գեղարքունիք | 36 | 3 | 0 | 33 | 8 |
| Լոռի | 18 | 3 | 0 | 15 | 7 |
| Կոտայք | 17 | 1 | 0 | 16 | 5 |
| Շիրակ | 16 | 0 | 0 | 16 | 5 |
| Սյունիք | 3 | 0 | 0 | 3 | 1 |
| Վայոց ձոր | 5 | 3 | 0 | 2 | 1 |
| Տավուշ | 10 | 2 | 0 | 8 | 4 |
| Ընդամենը | 196 | 24 | 0 | 172 | 59 |




[4] Թլիկ համայնքում ընտրությունը ճանաչվել է չկայացած

## Ըստ քվեաթերթիկներում ընդգրված թեկնածուների քանակի

| Մարզ | քվեաթերթիկում ընդգրված թեկնածուների քանակը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 թեկնածու | 2 թեկնածու | 3 թեկնածու | 4 թեկնածու | 5 թեկնածու | 6 թեկնածու | 7 թեկնածու | 8 թեկնածու |
| Արագածոտն | 4 | 1 | 2 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Արարատ | 0 | 2 | 2 | 0 | 1 | 0 | 0 | 1 |
| Արմավիր | 3 | 5 | 3 | 2 | 2 | 0 | 0 | 0 |
| Գեղարքունիք | 0 | 2 | 2 | 1 | 1 | 1 | 0 | 1 |
| Լոռի | 2 | 2 | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Կոտայք | 0 | 2 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 0 | 3 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Սյունիք | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 1 | 2 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը | 10 | 20 | 16 | 5 | 5 | 1 | 1 | 2 |






# Համայնքի վերընտրված ղեկավարներ

| Մարզ | ընդամենը համայնք | քվ. մասն. թեկնածուներ | վերընտրվել են | չեն վերընտրվել | հերթական ընտրություններում չեն առաջադրվել | |
|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն[5] | 8 | 16 | 5 | 1 | 0 | |
| Արարատ | 6 | 23 | 2 | 0 | 0 | |
| Արմավիր | 15 | 40 | 9 | 1 | 0 | |
| Գեղարքունիք | 8 | 33 | 2 | 1 | 2 | Գեղարքունիք, Ջովաբեր |
| Լոռի | 7 | 15 | 3 | 0 | 1 | Եղեգնուտ |
| Կոտայք | 5 | 16 | 3 | 0 | 1 | Քաղսի |
| Շիրակ | 5 | 16 | 3 | 0 | 0 | |
| Սյունիք | 1 | 3 | 0 | 0 | 0 | |
| Վայոց ձոր | 1 | 2 | 0 | 0 | 0 | |
| Տավուշ | 4 | 8 | 2 | 0 | 1 | Ծաղկավան (Իջևան) |
| **Ընդամենը** | 60 | 172 | 29 | 3 | 5 | |




[5] Թլիկ համայնքում ընտրությունը ճանաչվել է չկայացած

## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | ինքնաբացարկ | մերժված | քվ. մասն. թեկնածուներ | ընտրված |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 18 | 1 | 0 | 17 | 15 |
| Արարատ | 92 | 3 | 0 | 89 | 43 |
| Արմավիր | 40 | 1 | 0 | 39 | 24 |
| Գեղարքունիք | 8 | 0 | 0 | 8 | 7 |
| Լոռի | 36 | 1 | 0 | 35 | 27 |
| Կոտայք | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 30 | 0 | 0 | 30 | 21 |
| Սյունիք | 21 | 1 | 0 | 20 | 7 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 60 | 3 | 0 | 57 | 34 |
| Ընդամենը | 305 | 10 | 0 | 295 | 178 |



# Ըստ թեկնածուների կուսակցական պատկանելության
## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադր-ված | Ինքնաբա-ցարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ ինքնաառաջ ադրումով | ընտրված | որից՝ ինքնաառաջ ա-դրումով |
|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ | 177 | 24 | 153 | 152 | 51 | 51 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 3 | 0 | 3 | 3 | 2 | 2 |
| ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 4 | 0 | 4 | 4 | 2 | 2 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 2 | 0 | 2 | 2 | 1 | 1 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 10 | 0 | 10 | 9 | 3 | 3 |
| **Ընդամները** | 196 | 24 | 172 | 170 | 59 | 59 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադրված | ինքնաբացարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ ինքնաառաջադրումով | ընտրված | որից՝ ինքնաառաջադրումով |
|---|---|---|---|---|---|---|
| ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ | 288 | 10 | 278 | 276 | 168 | 167 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 8 | 0 | 8 | 6 | 5 | 5 |
| ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 3 | 0 | 3 | 3 | 2 | 2 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 1 | 0 | 0 |
| ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 4 | 0 | 4 | 4 | 3 | 3 |
| **Ընդամենը** | 305 | 10 | 295 | 290 | 178 | 177 |



# Ըստ թեկնածուների առաջադրման

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադրված | ինքնաբացարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ անկուսակցական | ընտրված | որից՝ անկուսակցական |
|---|---|---|---|---|---|---|
| ԻՆՔՆԱԱՌԱՋԱԴՐՈՒՄ | 194 | 24 | 170 | 152 | 59 | 51 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 1 | 0 | 0 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 196 | 24 | 172 | 153 | 59 | 51 |

## Ավագանու անդամի թեկնածուներ

| Կուսակցության անվանումը | առաջադրված | ինքնաբացարկ | քվ. մասն. թեկնածուներ | որից՝ անկուսակցական | ընտրված | որից՝ անկուսակցական |
|---|---|---|---|---|---|---|
| ԻՆՔՆԱԱՌԱՋԱԴՐՈՒՄ | 300 | 10 | 290 | 276 | 177 | 167 |
| ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 2 | 0 | 2 | 0 | 0 | 0 |
| ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 3 | 0 | 3 | 2 | 1 | 1 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 305 | 10 | 295 | 278 | 178 | 168 |



# Ըստ թեկնածուների սեռի

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | | ինքնաբացարկ | | քվ. մասն. | | ընտրված | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | արական | իգական | արական | իգական | արական | իգական |
| Արագածոտն | 21 | 0 | 5 | 0 | 16 | 0 | 7 | 0 |
| Արարատ | 24 | 1 | 2 | 0 | 22 | 1 | 6 | 0 |
| Արմավիր | 45 | 0 | 5 | 0 | 40 | 0 | 15 | 0 |
| Գեղարքունիք | 36 | 0 | 3 | 0 | 33 | 0 | 8 | 0 |
| Լոռի | 17 | 1 | 3 | 0 | 14 | 1 | 6 | 1 |
| Կոտայք | 17 | 0 | 1 | 0 | 16 | 0 | 5 | 0 |
| Շիրակ | 16 | 0 | 0 | 0 | 16 | 0 | 5 | 0 |
| Սյունիք | 3 | 0 | 0 | 0 | 3 | 0 | 1 | 0 |
| Վայոց ձոր | 5 | 0 | 3 | 0 | 2 | 0 | 1 | 0 |
| Տավուշ | 10 | 0 | 2 | 0 | 8 | 0 | 4 | 0 |
| Ընդամենը | 194 | 2 | 24 | 0 | 170 | 2 | 58 | 1 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | առաջադրված | | ինքնաբացարկ | | քվ. մասն. | | ընտրված | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արական | իգական | արական | իգական | արական | իգական | արական | իգական |
| Արագածոտն | 16 | 2 | 1 | 0 | 15 | 2 | 13 | 2 |
| Արարատ | 77 | 15 | 1 | 2 | 76 | 13 | 39 | 4 |
| Արմավիր | 37 | 3 | 1 | 0 | 36 | 3 | 22 | 2 |
| Գեղարքունիք | 7 | 1 | 0 | 0 | 7 | 1 | 6 | 1 |
| Լոռի | 31 | 5 | 1 | 0 | 30 | 5 | 24 | 3 |
| Կոտայք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 28 | 2 | 0 | 0 | 28 | 2 | 19 | 2 |
| Սյունիք | 21 | 0 | 1 | 0 | 20 | 0 | 7 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 55 | 5 | 3 | 0 | 52 | 5 | 31 | 3 |
| Ընդամենը | 272 | 33 | 8 | 2 | 264 | 31 | 161 | 17 |



# Ըստ թեկնածուների տարիքի

## Համայնքի ղեկավարի թեկնածուներ

| Մարզ | մինչև 40 | որից՝ ընտրված | 40-60 | որից՝ ընտրված | 60 և ավելի | որից՝ ընտրված |
|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 4 | 1 | 9 | 5 | 3 | 1 |
| Արարատ | 9 | 1 | 14 | 5 | 0 | 0 |
| Արմավիր | 13 | 6 | 21 | 8 | 6 | 1 |
| Գեղարքունիք | 16 | 4 | 11 | 3 | 6 | 1 |
| Լոռի | 9 | 3 | 4 | 3 | 2 | 1 |
| Կոտայք | 5 | 2 | 8 | 2 | 3 | 1 |
| Շիրակ | 5 | 2 | 9 | 1 | 2 | 2 |
| Սյունիք | 2 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 2 | 1 | 0 | 0 |
| Տավուշ | 5 | 2 | 3 | 2 | 0 | 0 |
| Ընդամենը | 68 | 22 | 82 | 30 | 22 | 7 |



## Ավագանու անդամի թեկնածուներ

| Մարզ | մինչև 40 | որից՝ ընտրված | 40-60 | որից՝ ընտրված | 60 և ավելի | որից՝ ընտրված |
|---|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | 6 | 5 | 8 | 7 | 3 | 3 |
| Արարատ | 49 | 25 | 33 | 16 | 7 | 2 |
| Արմավիր | 19 | 9 | 14 | 12 | 6 | 3 |
| Գեղարքունիք | 2 | 2 | 5 | 4 | 1 | 1 |
| Լոռի | 18 | 16 | 13 | 10 | 4 | 1 |
| Կոտայք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Շիրակ | 13 | 10 | 14 | 11 | 3 | 0 |
| Սյունիք | 5 | 2 | 15 | 5 | 0 | 0 |
| Վայոց ձոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տավուշ | 31 | 18 | 22 | 12 | 4 | 4 |
| Ընդամենը | 143 | 87 | 124 | 77 | 28 | 14 |



## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք:»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած անձինք մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:»:

2018 թվականի ընթացքում ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների պլանավորումը խիստ դժվար էր, քանզի Ընտրական օրենսգիրքը բարեփոխելու նպատակով ընթանում էին ակտիվ աշխատանքներ և միանշանակ է, որ դասընթացները պետք է կազմակերպվեին նոր իրավակարգավորումների առկայության պայմաններում: Նշվածով պայմանավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սպասում էր Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունմանը, որպեսզի կազմակերպեր 2018 թվականի համար նախատեսված դասընթացները: Միայն 2018 թվականի հոկտեմբերի 30-ին պարզ դարձավ, որ փոփոխությունները չեն ընդունվելու և արտահերթ ընտրությունները կազմակերպվելու են 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2018 թվականի նոյեմբերի 1-ի «Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-475-Ն հրամանագրով Ազգային ժողովի արտահերթ ընտրությունը նշանակվեց 2018 թվականի դեկտեմբերի 9-ին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովներում Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)՝ նշանակելու էին երկուական անդամ, ինչպես նաև հիմք ընդունելով այն օրենսդրական պահանջը, ըստ որի՝ Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2018 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 11-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Նշված դասընթացներին մասնակցելու համար ներկայացվել էր 10420 հայտ, որոնցից 8598-ը ներկայացվել էր կուսակցությունների կողմից, իսկ 1822՝ քաղաքացիների: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 7986 քաղաքացիներ, որոնցից 7291-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները զետեղվել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով և գնահատման փուլում բացառվել է սուբյեկտիվիզմով պայմանավորված ցանկացած մոտեցում, գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով ևս զետեղված է եղել համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր քաղաքներում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Չնայած աշխատանքի մեծ ծավալներին, այդուհանդերձ ստուգարքների արդյունքներն ամփոփվեցին և որակավորման վկայական ստացած քաղաքացիները չունեցան որևէ խոչընդոտ հանձնաժողովներում նշանակվելու առումով: Ավելին, Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցություններն (կուսակցությունների դաշինքներն) ունեցան անհրաժեշտ քանակի կադրեր տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը համալրելու համար:

Ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար 2019 թվականի ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպվեցին և անցկացվեցին 2019 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 30-ը: Նշված դասընթացներին մասնակցելու համար ներկայացվել էր 14498 հայտ, որոնցից 10094-ը ներկայացվել էր կուսակցությունների կողմից, իսկ 4404՝ քաղաքացիների: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 11150 քաղաքացիներ, որոնցից 9893-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

Հարկ է նկատել, որ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո իրականացվեց նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցումը: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովներն արտահերթ ընտրությունների դեպքում կազմավորվում են քվեարկության օրվանից 18 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմեց 12 օր, իսկ ուսուցմանը մասնակցեցին տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 16.500 անդամներ: Կազմակերպված դասընթացներին ապահովվեց շուրջ 83 տոկոս մասնակցություն, ինչն իրառմամբ նախադեպը չունեցող ակտիվություն էր, որը պայմանավորված էր նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) արդյունավետ համագործակցությամբ: Դասընթացի բոլոր մասնակիցներին տրամադրվեցին տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար մշակված ուղեցույցներ:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ**

| | 2018 | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Հայտատու** | Ընդամենը | Մասնակցած | % | ստացած | % |
| քաղաքացիներ | 1822 | 1794 | 98.46 | 1672 | 93.20 |
| ԲՀԿ | 1471 | 1065 | 72.40 | 978 | 91.83 |
| ԼՀԿ | 1854 | 1356 | 73.14 | 1190 | 87.76 |
| ՀԿ | 129 | 94 | 72.87 | 83 | 88.30 |
| ՀՀԿ | 247 | 172 | 69.64 | 138 | 80.23 |
| ՀՅԴ | 969 | 650 | 67.08 | 586 | 90.15 |
| ՔՊԿ | 3928 | 2855 | 72.68 | 2644 | 92.61 |
| Ընդամնեը | 10420 | 7986 | 76.64 | 7291 | 91.30 |

| | 2019 | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Հայտատու** | Ընդամենը | Մասնակցած | % | ստացած | % |
| քաղաքացիներ | 4404 | 4050 | 91.96 | 3673 | 90.69 |
| ԲՀԿ | 4386 | 3129 | 71.34 | 2693 | 86.07 |
| ԼՀԿ | 843 | 597 | 70.82 | 520 | 87.10 |
| ՀՀԿ | 2562 | 1764 | 68.85 | 1598 | 90.59 |
| ՀՅԴ | 1902 | 1316 | 69.19 | 1147 | 87.16 |
| ՔՊԿ | 401 | 294 | 73.32 | 262 | 89.12 |
| Ընդամնեը | 14498 | 11150 | 76.91 | 9893 | 88.73 |




2019 թվականին ՄԱԶԾ «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն 2» ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում բացվեց ժամանակակից կահավորմամբ ուսումնական կենտրոն, նոր տեխնիկական և ծրագրային լուծումներ, որը հնարավորություն է տալու մոտ ապագայում համապատասխան հայտերի առկայության պարագայում ստուգարքներ անցկացնել ցանկացած օրը, և անմիջապես իրականացնել գնահատումը և որակավորման վկայականների շնորհումը: Մշակված նոր լուծումները հնարավորություն են ընձեռելու նաև մոտ ապագայում հեռավար ուսուցման կազմակերպումը:

Մշակվել և ներդրվել են ծրագրային նոր լուծումներ, որոնք հանարավորություն են տալիս մասնագիտական դասընթացների մասնակցության հայտերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Ի դեպ, համակարգը պարունակում է այնպիսի լուծումներ, որն սկզբունքորեն բացառում է հայտերի մուտքագրման ժամանակ տեխնիկական և մեխանիկական սխալների հնարավորությունը, ինչպես նաև նույն տվյալների կրկնակի մուտքագրումը:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

2018-2019 թվականների ընթացքում կազմակերպված համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ շարունակվել են կիրառվել տեխնիկական սարքավորումները, որոնց միջոցով իրականացվել է ընտրողների գրացումը: Կարևոր ենք համարում ընդգծել, որ տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման համակարգի ներդրումն իրականացվեց «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» ծրագրի աջակցությամբ: «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» առաջին ծրագիրը կյանքի կոչվեց Եվրոպական միության, ԱՄՆ Միջազգային

զարգացման գործակալության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության ֆինանսավորմամբ և իրականացվեց Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի կողմից: Ի դեպ, նույն ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվեց նաև ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանումը և միաժամանակյա համացանցային հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում, ինչպես նաև ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման համար սքանավորող սարքերի ձեռքբերումը:

2018-2019 թվականների ընթացքում կազմակերպված համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների կիրառումն իրականացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տեղական մասնագետների կողմից, ինչը նշանակում է, որ նախկինում օտարերկրյա մասնագետների փոխանցած գիտելիքն ու փորձ լիարժեք յուրացվել է և հետագայում կիրառվել:

Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների ժամանակ 1998 տեղամասերում գործարկվեցին 4.000 տեխնիկական սարքավորումներ:

2018 թվականի նոյեմբերի 23-ից սկսվեցին տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքները: Ստուգվեցին շուրջ 4500 տեխնիկական սարքավորում, վերացվեցին առանձին տեխնիկական և ծրագրային թերությունները, մի շարք սարքավորումների պարագայում փոխարինվեցին շարքից դուրս եկած փոքր մարտկոցները, ստուգվեցին 1551 անխափան սնուցման սարքավորումները և 1500 երթուղիչները:

2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 30-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրեց ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 132 քաղաքացիների ուսուցումը: Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 12 օրվա ընթացքում կազմակերպվեց և անցկացվեց տեխնիկական սարքավորումները սպասարկող շուրջ 4.550 մասնագետների ուսուցում և ստուգարք:

Տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն ունեին քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն: Թվով 1426 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ (850-ում օգտագործվել են 2-ական տեխնիկական սարքավորում, 576-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում), որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը

հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 5 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների, և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրության նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ամփոփել է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակել հանձնաժողովի համացանցային կայքում:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ: Պատրաստվել և հրապարակվել է տեղեկատվական բնույթի պաստառ, հանրային իրազեկման 2 տեսահոլովակ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2018 թվականի դեկտեմբերի 5-ին կազմակերպվել է տեխնիկական սարքավորումների, տեղամասային կենտրոններում տեղադրվող տեսախցիկների աշխատանքի, հանձնաժողովում գործածվող ծրագրային ապահովման միջոցների ցուցադրում-փորձարկում:

Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ընտրություններին 1998 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործված թվով 4000 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 39 տեխնիկական սարքավորման գործարկման հետ: Մասնավորապես, տարբեր տեխնիկական պատճառներով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 33 տեխնիկական

սարքավորում, որոնցից 17-ը քվեարկության նախորդ օրը, իսկ 16-ը քվեարկության օրը:

Թվով 3428 տեխնիկական սարքավորում աշխատել են սինքրոնիզացված և ընդամենը 21 տեխնիկական սարքավորման պարագայում են խնդիրներ ծագել, որոնք անհապաղ լուծում են ստացել: Առկա չի եղել որևէ դեպք, երբ դադարեցվի տեխնիկական սարքավորման աշխատանքը:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1998 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների քվեարկության օրն ընտրողների գրանցումն իրականացվել է ընդհանուր թվով 1380 տեխնիկական սարքավորումների կիրառմամբ: 475 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 430-ում գործարկվել են 3-ական, իսկ 44-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորումներ և մեկում՝ մեկ: Տեղամասային կենտրոններում տեխնիկական սարքավորումները աշխատել են միասնական սինքրոնիզացված կապով: Ունեցել ենք եզակի թվով տեխնիկական խափանումներ, որոնք շտկվել են հենց քվեարկության ընթացքում:

2018 և 2019 թվականների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության օրն ընտրողների գրանցումն իրականացվել է ընդհանուր թվով 807 տեխնիկական սարքավորումների կիրառմամբ:

2018 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընդհանուր առմամբ գործածված թվով 452 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 19 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված: Մասնավորապես, տեխնիկական պատճառով խափանվել և նորերով են փոխարինվել 13 տեխնիկական սարքավորում, գրանցվել են նաև առանձին խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Արդյունքում, 2018 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընդհանուր առմամբ գործածված թվով 355 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել մոտ 20 տոկոսի հետ կապված՝ ավելի քան

60 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված, հիմնականում խնդիրը կապված է եղել սարքավորումների փոքր մարտկոցների (BIOS) հետ: Այդուհանդերձ տեխնիկական սարքավորումների հետ կապված բոլոր խնդիրներն անմիջապես լուծում են ստացել և արդյունքում՝ 2019 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ բոլոր՝ 166 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ: Պատրաստվել և հրապարակվել է տեղեկատվական բնույթի պաստառ, հանրային իրազեկման 2 տեսահոլովակ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 2018 թվականի դեկտեմբերի 5-ին կազմակերպվել է տեխնիկական սարքավորումների, տեղամասային կենտրոններում տեղադրվող տեսախցիկների աշխատանքի, հանձնաժողովում գործածվող ծրագրային ապահովման միջոցների ցուցադրում-փորձարկում:

2019 թվականին ՄԱԶԾ «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցություն 2» ծրագրի շրջանակներում մշակվել են նոր ծրագրային լուծումներ, որոնց կիրառմամբ ձևավորվել է էլեկտրոնային շտեմարան, որում գույքագրված են բոլոր տեխնիկական սարքավորումների և մյուս պարագաների տվյալները, ինչպես նաև կիրառության ընթացքում ի հայտ եկած թերություններն ու խնդիրները: Նշվածը հնարավորություն է տալիս իրականացնել էլեկտրոնային ճիշտ կառավարում տեխնիկական սարքավորումների ընթացիք տեխնիկական վիճակի վերաբերյալ՝ թերությունների ժամանակին արձանագրում, դրանց համակարգում, հետագա վերլուծությունների իրականացում, նոր տեխնիկական կամ կազմակերպական լուծումների և հրահանգների ձևավորում, համակարգի վիճակի գնահատում և այլն: Ձևավորվել է նաև տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների տվյալների էլեկտրոնային շտեմարան:

Նույն ծրագրի շրջանակներում 2019թ. ընթացքում երկու անգամ իրականացվել են կենտրոնական պահեստում առկա բոլոր տեխնիկական սարքավորումների պլանային թեսթավորում և հաշվառում: Այս գործընթացների ընթացքում հայտնաբերված խնդիրների մասին պատշաճ կերպով տեղեկացրել ենք տեխնիկական սարքավորումների արտադրող և սպասարկող կազմակերպությանը (Smartmatic), որն էլ 2019թ դեկտեմբեր ամսին իրականցրել է բոլոր 4000 տեխնիկական սարքավորումների փոքր մարտկոցների փոխարինում նոր

մարտկոցներով: Զուգահեռ իրականացվել են նոր 361 տեխնիկական սարքավորումների տպիչի դեֆեկտավոր պլաստիկ մասերի փոխարինում:

## ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի վերլուծությունը, երիտասարդ դեմոկրատիայի երկրներում ընտրական գործընթացներում նոր օրենսդրական լուծումների փնտրտուքը, առաջին հերթին, նպատակ է հետապնդում նպաստելու ընտրական գործընթացի բոլոր փուլերի նկատմամբ առավել թափանցիկության և լիակատար հանրային վերահսկողության հնարավորության ապահովմանը: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության դիֆիցիտը հնարավոր է լրացնել միայն այս գործիքակազմի լիարժեքությամբ:

Այս առումով, կարծում ենք, կարևորագույն քայլը հանրային իրազեկումն է: Երբ յուրաքանչյուր ընտրող, քաղաքական կուսակցության և քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ լիարժեք ծավալով իրազեկվում է ոլորտի օրենսդրական բոլոր փոփոխություններին, միաժամանակ ստանալով պարզաբանում և բացատրություն այդ փոփոխությունների նպատակի և սպասվելիք արդյունքի վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջնային խնդիրներից էր հանրությանը և ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերին մանրամասն ներկայացնել ընտրական բարեփոխումներն իրացնելուն ուղղված գործողությունները, անգամ տեխնիկական լուծումները: Սա շատ կարևոր է, քանզի պասիվ ընտրական իրավունք իրացնող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է լիարժեք տեղյակ լինի իր իրավունքներին և պարտականություններին, յուրաքանչյուր ընտրող մինչև տեղամաս գալը պետք է հստակ պատկերացում ունենա քվեակարգի մասին, հանրությունը պետք է իրազեկ լինի ընտրության արդյունքների ամփոփման կարգին ու ժամկետներին, իրավունքների պաշտպանության կարգին:

Այս առումով կարևոր են ոչ միայն կլոր սեղանների, հասարակության տարբեր հատվածների հետ հանդիպումները, այլև դրանց լայն լուսաբանումը, մեծածավալ և ըստ շահառուների ուսումնադիդակտիկ նյութերի հրապարակումն ու տարածումը:

Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 13, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ 11 ուղեցույց՝ ուսումնական ձեռնարկ տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների,

զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի մասին, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույց վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուղեցույց, քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ, տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների համար:

Նշված ուղեցույցներից 1-ը հրապարակվել է նաև օտարալեզու (անգերեն) տարբերակով: Հրատարակվել է 6 տեղեկատվական բնույթի պաստառ, 5 հանրային իրազեկման հոլովակ: Հրապարակվել է նաև քվեարկության կարգի պարզաբանման վերաբերյալ պաստառ ժամկետային զինծայառողների համար, որն առաքվել է զորամասեր:

Հաշվի առնելով քվեակարգի առանձնահատկությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակեց քվեարկության կարգի երկու ուղեցույց, որոնք տպագրվեցին 300.000 տպաքանակով և տրամադրվեցին ընտրողներին հանրային սննդի, առևտրի օբյեկտների միջոցով, հանրային տրանսպորտում, կամավորականների, տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների դասընթացների մասնակիցների ջանքերով: Հարկ է նկատել, որ բոլոր ուսումնադիդակտիկ նյութերը հրապարակվելուց հետո տեղադրվում էին նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և դրանց մասին տրվում էին մամուլի հաղորդագրություններ:

Այս ամենի արդյունավետությունը կարելի է անգամ թվերով գնահատել: Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների ժամանակ անվավեր քվեթերթիկների թիվը կազմել է 4.706 կամ 0.37 տոկոս, իսկ Երևանի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 23-ի արտահերթ ընտրությունների ժամանակ 7539 կամ 2%:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին, հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվել են ընտրական օրենսգրքեր և ուղեցույցներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել են բազմաթիվ ասուլիսներ, հրապարակվել են հոդվածներ և հարցազրույցներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անցկացրել է պարբերական հանդիպումներ և քննարկումներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների,

կուսակցությունների դաշինքների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Առկա չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որևէ պարզաբանում կամ որոշում, որը նախապես մանրամասն քննարկված չլիներ նշված սուբյեկտների հետ, լսված չլիներ նրանց կարծիքն ու առաջարկությունները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առանձին ուշադրության առարկա էր դարձրել քվեարկության մասնակցության խթանումը և ընտրակաշառքի անթույլատրելիությունն ու մերժումը: Նշվածով պայմանավորված նախապատրաստվեց հոլովակ քվեարկության մասնակցության խթանման վերաբերյալ, որում առաջին անգամ կիրառվեց նաև ներառական էլեմենտ: Մշակվեց ընտրակաշառքի անթույլատրելիության վերաբերյալ պաստառ, որը տեղադրվեց նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում: Մշակված պաստառները փակցված էին 2010 ընտրական տեղամասերում, հանրապետության ամբողջ տարածքում առկա էր նշված պաստառով 84 արտաքին գովազդային վահանակ, իսկ Երևան քաղաքի լուսադիոդային էկրաններին ցուցադրվում էր պաստառի էլեկտրոնային տարբերակը: Ընտրակաշառքի անթույլատրելիության հետ կապված հրապարակվեց երկու ռադիո-ուղերձ, որոնք պարբերաբար ներկայացվում էին ռադիոեթերում:

Մշակվեց և տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրամադրվեց 80.000 կրծքանշան առաջին անգամ քվեարկության մասնակիցներին տրամադրելու համար, ինչպես նաև հատուկ ուղեցույց այդ նպատակով: Ընտրական գործընթացի մասնակիցների համար մշակվեց նաև 3000 կպչուն ժապավեն քվեի կարևորության կագախոսներով:

Ազգային ժողովի և Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների քվեարկության օրերին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել են ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգներ, որին մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կազմակերպվել են տեսազանգեր տարածքային ընտրական հանձնաժողովների հետ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպման նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման բրիֆինգներ չեն կազմակերպվել հանրային պահանջարկով պայմանավորված, սակայն քվեարկության ամբողջ օրվա ընթացքում տրվել են լիարժեք տեղեկություններ քվեարկության մասնակիցների, իսկ առանձին դեպքերում նաև պարզաբանումներ քվեարկության օրը նկատված թերությունների մասին: Հարկ է

նկատել, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քվեարկության ամբողջ օրվա ընթացքում քվեարկության մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պահանջ օրենսդրորեն սահմանված չէ:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփման նիստն ուղիղ եթերով հեռարձակվել է գրեթե բոլոր հեռուստաընկերությունների կողմից:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը առաձնակի ուշադրություն է դարձվել Կենտրոնական ընտրական հանձաժողովի կայքի թարմացման աշխատանքներին:

Կայքի միջոցով հնարավոր էր ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ:

Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան մշակված և գործարկված ծրագրային միջոցներով ապահովվել է՝

- տարածքային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների տվյալները մուտքագրելու, ըստ տարբեր տվյալների որոնելու, ֆիլտրելու, տվյալների ելքային փաստաթղթի ձևավորման (Excel-ի աղյուսակներ) և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները կայքում հրապարակելու հնարավորությունը,

- նախապատվության քվեակարգով քվեարկության իրականացման նպատակով էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորման, քվեարկության գաղտնիության ապահովման, նախապատվությամբ քվեարկելու, քվեարկության արդյունքներն ամփոփելու, արդյունքների ելքային փաստաթղթի ձևավորման հնարավորությունները,

- ըստ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման իրականացումը՝

օգտագործելով պատահականության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված որակական չափանիշներին համապատասխան ընտրանքի հնարավորությունը.

- վարչական վարույթներով ծանուցումների կազմակերպումը:

Արտերկրից առցանց քվեարկության նպատակով գործարկվել է էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը, որն իր մեջ ընդգրկում է կոդավորման միջոցները, էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորումը, օգտվողների (առցանց քվեարկելու իրավունք ունեցողների) գրանցումը, գրանցված օգտվողների կողմից սեփական կոդերի ներմուծումը, նրանց կողմից էլեկտրոնային քվեարկության իրականացումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեարկության արդյունքների ամփոփումը, ելքային փաստաթղթի ձևավորումը, արդյունքների հրապարակման հնարավորությունը:

Նախագծվել, մշակվել և ներդրվել են քվեարկության օրը տարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորություններ՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրա-տեխնիկական միջոցներ:

Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր դարձավ հետևել տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների առցանց հեռարձակմանն ավելի քան 1500 տեղամասերից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում առկա տվյալների մշակմամբ 2019 թվականին թողարկել ենք «Կանանց և տղամարդկանց մասնակցությունն 2018թ. ընտրական գործընթացներին վիճակագրական տվյալներ» ձեռնարկը: Այն հրապարակվել է նաև անգլերեն լեզվով: Կարծում ենք, որ նշված հետազոտությունը պարունակում է բավականին հետաքրքիր և արժեքավոր վիճակագրական տվյալներ որորտի նկատմամբ հետաքրքրություն ունեցող սուբյեկտների համար:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով Ընտրական օրենսգրքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված իրավասությունից, սույն հաղորդմամբ միաժամանակ ներկայացվում են ընտրական գործընթացի կազմակերպման բարելավմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ որոշ առաջարկություններ՝ նպատակ ունենալով նպաստելու ընտրական վարչարարության բարելավմանը: Մասնավորապես,

- առաջարկվում է վերանայել Ընտրական օրենսգրքով արտահերթ ընտրությունների դեպքում որոշ գործառույթների կատարման մասով սահմանված ժամկետները, քանզի առանձին դեպքերում միմյանց հետ անմիջական կապ ունեցող գործառույթների համար սահմանված են այնպիսի ժամկետներ, որ համապատասխան գործառույթի իրականացման ժամանակ գործնականում ծագում են լուրջ խնդիրներ: Օրինակ՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների դեպքում արտահերթ ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովն արձակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 45 օր հետո, մինչդեռ որոշ գերատեսչությունների համար մեկ այլ դրույթով քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր սահմանված է գործառույթի կատարում: Խոսքը վերաբերում է պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության կողմից իրենց իրավասության շրջանակներում համապատասխան ընտրողների թիվը լիազոր մարմնին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելուն, որով հետագայում իրականացվում են հստակ գործառույթներ,

- առաջարկվում է վերանայել տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով ընտրողների ցուցակները կազմելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելու ժամկետները, քանզի համապետական ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների մեջ տեղադրվող հիշողության կրիչների քանակով պայմանավորված այդ կրիչների կրկնօրինակման, ստուգման և տեղադրման աշխատանքներում ծագում են լուրջ խնդիրներ,

- վերանայման անհրաժեշտություն է առկա նաև տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների ժամանակ սահմանված որոշ ժամեկտներում, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասերը դեռևս չկազմավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողով պետք է ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը (Հոդված 44, մաս 6 «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը

18.00-ն, արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն», Հոդված 122, մաս 6 «Ընտրական տեղամասերը կազմավորվում, և տեղամասային կենտրոնները սահմանվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ ...» և ևս 3 օր համարակալելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներայացնելու համար):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջարկում է ամբողջությամբ վերանայել արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման կարգն ու ժամկետները, դրանք համապատասխանեցնելով հերթական ընտրությունների համար սահմանված ժամկետներին: